

ք. Երևան

«-----» ----- 2011թ.

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Կ. Իսախանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից՝ և «Երեքնուկ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Հարությունյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի տնտեսական ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Ապրանքի մատակարարումն սկսվում է 2011 թվականի փետրվարից, և իրականացվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցին համապատասխան:

1.3 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2. Ապրանքի գինը և վճարման կարգը

2.1 Սույն պայմանագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի գինը, ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է 36.75 հազար դրամ: Գինը ներառում է Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով հաշիվ-ապրանքագրի և հանձնման-ընդունման արձանագրության (ձև N 4) հիման վրա սույն պայմանագրի N 3 հավելվածին՝ վճարման ժամանակացույցին համապատասխան:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի միջև պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Կողմերը սահմանում են, որ սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում են Պետական գնումների գործակալության և Վաճառողի միջև 2010 թվականի հուլիսի 14-ին կնքված N ՊԱՊԶԲ-10/11-3 գնման նախնական պայմանագրով հաստատված օրինակելի պայմանագրի դրույթները:

3.3 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են 7 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գ Ն Ո Ր Դ

ՀՀ տարածքային կառավարման
նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011003150, 900011003168
ՀՎՀՀ 02578338

(ստորագրություն)
Կ.Տ

Մ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ր

« Երեքնուկ » ՍՊԸ
ք. Երևան, Ռոստոմի 58տ
«ՎՏԲ Հայաստան թանկ» ՓԲԸ
Հ/Հ 160480011768
ՀՎՀՀ 90026025

(ստորագրություն)
Կ.Տ